

**ՀՀ կենտրոնական բանկի կարծիքը**  
**«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը**  
**հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**  
**վերաբերյալ**

Համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված տնտեսական անկումը Հայաստանում իր առավելագույն մակարդակին հասավ 2009 թվականի երկրորդ եռամսյակում (տ/տ 21.8%), իսկ դրան հաջորդող եռամսյակների ընթացքում աստիճանաբար սկսեց դրսևորել անկման տեմպի նվազման միտումներ: Վերջինս հիմնականում պայմանավորված էր 2009 թվականի ամբողջ ընթացքում հարկաբյուջետային և դրամավարկային խթանող քաղաքականությունների հետևողական իրականացմամբ և համաշխարհային տնտեսության տարեվերջին նկատվող դրական միտումների ձևավորմամբ: Արդյունքում, արձանագրվեց մակրոտնտեսական իրավիճակի աստիճանական բարելավում և արդեն տարվա չորրորդ եռամսյակում տնտեսական անկումը կազմեց 4.6%, որի պարագայում հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշը ձևավորվեց 14.4% մակարդակում:

ՀՀ տնտեսության ակտիվության անկումը իր ազդեցությունն ունեցավ նաև պետական բյուջեի՝ հատկապես հարկային եկամուտների հավաքագրումների մակարդակի վրա: Այս պայմաններում, տարվա առաջին կեսին հարկերի հավաքագրման գործընթացը բնութագրվեց անբարենպաստ զարգացումներով, որը իրականացված հակաճգնաժամային միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ որոշ չափով մեղմել տարվա երկրորդ կեսին: Տարվա առաջին կեսին հարկային եկամուտների գծով արձանագրվեց նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 18.3% նվազում, իսկ տարվա արդյունքում այն կազմեց 15.9%: Վերջինս

ուղեկցվել է ՀՆԱ-ում հարկային եկամուտների նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ 0.5 տոկոսային կետ նվազմամբ: Հարկ է նշել, որ ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները ցածր են եղել ՀՀ պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսված մակարդակից 25.5%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 28.4%-ով:

Պետական ծախսային քաղաքականությունը 2009 թվականին իրականացվել է համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության խթանող ազդեցության դրսևորմամբ՝ պայմանավորված կառավարության կողմից հակաճգնաժամային ծրագրերի իրագործման արդյունքում պետական ծախսերի և տնտեսությանը վարկավորման ծավալների աճով: Ընդ որում, տնտեսական ոչ բարենպաստ զարգացումների և բյուջեի եկամուտների կատարման գործընթացում առկա դժվարությունների պայմաններում, ՀՀ կառավարությունը միջոցներ ձեռնարկեց կենսական նշանակության և սոցիալական բնույթի ծախսերը ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու ուղղությամբ:

Կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային ծրագրերի արդյունքները առավել պարզորոշ նկատվեցին 2009 թվականի չորրորդ եռամսյակում, երբ պետական ծախսերի զգալի՝ 21% աճի պայմաններում արձանագրվեցին ներքին պահանջարկի անկման տեմպերի նվազման միտումներ: Այստեղ հարկ է հիշատակել նաև 2009 թվականին ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերի նախորդ տարվա նկատմամբ 2.3 անգամ աճը (կամ 117 մլրդ դրամ) և ՀՀ տնտեսվարող սուբյեկտներին շուրջ 112 մլրդ դրամ վարկերի տրամադրումը, որոնք կարևոր նշանակություն ունեցան տնտեսության մասնավոր հատվածի վրա ճգնաժամի բացասական ազդեցության մեղմման տեսանկյունից: Ընդ որում, այդ միջոցներից 46.4 մլրդ դրամը, ինչպես նաև Համաշխարհային բանկի և Գերմանահայկական հիմնադրամի մեծածավալ վարկային միջոցները ՀՀ կենտրոնական բանկի միջոցով ուղղվեցին բանկային համակարգի վարկային պորտֆելի վերաֆինանսավորմանը՝ փոքր ու միջին ձեռնարկությունների, գյուղատնտեսության ոլորտի, ինչպես նաև հիփոթեքային շուկայի խթանման նպատակով:

Այսպիսով, 2009 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված ծախսերը կազմել են տարեկան ճշտված ծրագրի 93.6%-ը և սկզբնական ծրագրի 98.3%-ը: Ծախսերի ճշտված ծրագրից 6.4% շեղումը

պայմանավորված է ընթացիկ ծախսերի գծով առաջացած տնտեսումներով: Այսպիսով, 2009 թվականի արդյուքնում ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 14.7%-ով, որի պարագայում զգալի աճ է արձանագրվել նաև ծախսեր/ՀՆԱ-ցուցանիշի գծով՝ նախորդ տարվա 22.2%-ի դիմաց կազմել է 29.4%:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների «2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համամասնությունների նկատմամբ զգալի կրճատման պայմաններում ծախսերի տարեկան ծրագրված մակարդակի ֆինանսավորման ծանրությունը ընկավ արտաքին աղբյուրներից նոր միջոցների ներգրավման վրա, որի պարագայում բյուջեի պակասուրդը շուրջ 3.6 անգամ գերազանցեց տարվա համար նախատեսված մակարդակը: Միևնույն ժամանակ, զգալի աճ է արձանագրվել պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշի գծով՝ 7.55% տարվա համար նախատեսված 1%-ի և 2008 թվականի 0.67%-ի դիմաց: Ընդ որում, բյուջեի պակասուրդի 18.2%-ը ֆինանսավորվել է պետական արժեթղթերի հաշվին՝ 89%-ով գերազանցելով տարվա համար նախատեսված ցուցանիշը: Հարկ է նշել, որ պետական արժեթղթերի հաշվին ֆինանսավորման նշված մեծ մակարդակի ապահովմանը նպաստել են ՀՀ կենտրոնական բանկի հետ ձեռք բերած պայմանավորվածության համաձայն իրականացրած միջոցառումները, որոնց շրջանակներում 2009 թվականի ապրիլից սկսած ՀՀ կենտրոնական բանկը իրացվելիության ընդլայնման և պետական ծախսերի սահուն իրականացմանն օժանդակելու նպատակով երկրորդային շուկայում ակտիվորեն իրականացրել է պարտատոմսերի առքի գործառնություններ:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ 2009 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումների ներքո ձևավորված ՀՀ պետական բյուջեի կատարման ցուցանիշները՝ թե եկամուտների ՀՆԱ-ում զգալի կրճատման, և թե ծախսերի ՀՆԱ-ում զգալի աճի ապահովման պայմաններում, ամբողջական պահանջարկի վրա ունեցել են զգալի ընդլայնող ազդեցություն: Դրա մասին է վկայում նաև ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնահատող հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների համաձայն, տարվա համար կազմել է 9.2 տոկոսային կետ

ընդլայնող: Տարվա ընթացքում հակաճգնաժային միջոցառումների ներքո իրականացված հարկաբյուջետային և դրամավարկային խիստ ընդլայնողական քաղաքականությունների պայմաններում 2009 թվականի չորրորդ եռամսյակից արձանագրվող մակրոտնտեսական դրական զարգացումները կշարունակվեն մաս 2010 թվականի ընթացքում՝ բնականաբար ձևավորելով և պահպանելով գնաճային միջավայր: Հաշվի առնելով վերոհիշյալը, կարևորվում է մակրոտնտեսական կայունության ամրապնդման նպատակով հետագա տարիներին պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատումը, որը համապատասխան դրամավարկային քաղաքականության իրականացման հետ զուգահեռ իրական նախադրյալներ կստեղծի 2010-2011 թվականներին գնաճի նպատակային թիրախի ապահովման համար: